ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝ Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը տարրական դպրոցում, որպես ներգրավվածության խթանող միջոց

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Դարբինյան Համեստ

ՄԵՆԹՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արմինե Անտոնյան

ԴՊՐՈՑ՝ Արմավիր քաղաքի թիվ 8 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3--4

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ--5

ԳԼՈՒԽ 1

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ6-9

ՍԵՓԱԿԱՆ ԴԱՍԻ ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ-10

ԳԼՈՒԽ 2

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 11-14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ--15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ամենից առաջ զարգացող էակ է և զարգացումն այդ ենթակա է քիչ թե շատ կոշտ օրինաչափությունների: Յուրաքանչյուր տարիքում մարդը հասնում է զարգացման մի միջին մակարդակի, որն հնարավորություն է տալիս նրան յուրացնել-իմաստավորել աշխարհի մասին գիտելիքների ու հասկացությունների մի սահմանափակ ոլորտ: Այն բոլոր գիտելիքները, որոնք գտնվում են այդ ոլորտից դուրս՝ նա չի կարող յուրացնել, սեփականել:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այդ տիպի հաշվառումն ուսուցման պրակտիկայում անհրաժեշտ պայման է՝ կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ, հանրահայտ է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր (ո՛չ վերացական) բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել: Այսինքն՝ երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը. երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը՝ դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն:

Քննադատական մտածողության մասին շատ է գրվել:Քննադատաբար մտածողների համար ինֆորմացիայի հիմնական ընկալումը ավելի շուտ ուսումնական գործընթացի սկիզբն է, քան վերջնակետը: Քննադատաբար մատածելը ենթադրում է ընկալել գաղափարները և ապա սկսել խորհել դրանց նշանակության մասին, դիտել դրանք մի փոքր թերհավատությամբ՝ հավասարակշռելու համար դրանք դիտարկելով հակադիր տեսանկյուններից:

Քննադատական մտածողությունը ներառում է մտավոր բարդ գործընթաց, որը սկսվում է ինֆորմացիայով և ավարտվում է որոշման կայացմամբ: Քննադատական մտածողությունը հնարավոր է բոլոր տարիքներում: Փոքր երեխաները լիովին կարող են ներգրավվել իրենց զարգացմանը համապատասխան բարդացված մտածողության գործընթացում:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել քննադատական մտածողության ձևավորուման ու զարգացման արդյունավետ ուղիներ, մեթոդներ ու միջոցներ, որպես ներգրավվածության խթանող միջոց տարրական դպրոցում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2.սահմանել քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող մեթոդներն ու միջոցները:

3. առանձնացնել արդյունավետ մեթոդներն ու միջոցները և գործի դնել:

Քննադատական մտածողությունը կարդալու, գրելու, խոսելու և լսելու նման մի գործընթաց է, ակտիվ, համադրված, բարդ գործընթաց՝ ուղղված ինչ որ իրողության: Այն ինչ-որ բան չէ, որ կարելի է սովորեցնել համատեքստից դուրս: Քննադատական մտածողությունը լավ չի յուրացվում ուսումնական ծրագրի կամ առօրյա կյանքի համատեքստից դուրս: Դպրոցում քննադատաբար մտածել սովորելու լավագույն ձևն այդ մտածողությունը կիրառելն է՝ որպես որևէ գաղափարի մոտենալու եղանակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսումնակասիրելով թեմային վերաբերող գրականությունը, անդրադառնանք մի շարք մանկավարժ գիտնականների կարծիքներին։

Հոգեբանները գտնում են , որ հոգեպես լիարժեք անձ հնարավոր է ձևավորել խառնվածքային բոլոր տիպերի հիմքերի վրա, առանց բացառության։ Եվ անձի հոգեկան կերպարը որոշողը ոչ այնքան խառվածքն է, որքան հետաքրքրությունները, սկզբունքները, ընդունակությունները, բնավորությունը։ Հոգեկան կերպարը կերտվում է ընտանիքում և դպրոցում, հատկապես տարրական դասարաններում ՝ ուսուցման և դաստիարակության ընթացքում[1]։

Մանկավարժական անհաջողությունները չափազանց հաճախ են վերագրվում սովորողների թերություններին և չափազանց հազվագյուտ՝ ուսուցման մեթոդների անկատարությանը[2]։ Այս կարծիքն են կիսում նաև Յու. Ժ. Ազարովը, Ն. Ի.Բոլդիրևը, Վ. Մ.Կորոտովը։

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանական հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը[3] ։

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է։ Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ[4]։

ԳԼՈՒԽ 1

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մեթոդը, բառացի նշանակում է «որևէ բանի հասցնող ուղի, լայն իմաստով՝ նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն:

Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց և գործիք է, այն որոշակի սկզբունքներով, կանոններով ու հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող կարճագույն ուղի:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ: Ուրեմն, մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է: Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Կարևոր է ընդգծել նաև մեթոդի ու տեսության տարբերիչ առանձնահատկությունները: Տեսությունները երկու հիմնարար գործառույթ ունեն. բացատրել առկա փաստերը և կանխատեսել նոր փաստեր: Մեթոդը նման գործառույթներ չունի, այն ընդամենը տեսության կամ պրակտիկ գործունեության կարգավորիչ է, իրականության ճանաչման կամ նրա վերափոխման ռազմավարություն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը:

Քննադատական մտածողության նպաստող լրացուցիչ մեթոդներից է՝

- Հարցուպատասխանի մեթոդ
- Իմանալ-ուենալ,իմանալ-սովորել մեթոդը
- Դետեկտիվ մեթոդը
- Բանավեճի մեթոդը՝ ակադեմիական հասացություն,փաստարկներ քարտերի վրա

Քննադատական մտածողության համար նպաստավոր միջավայր ստեղծելը

Քննադատաբար մտածել սովորեցնելը մի անգամ կատարվող հեշտ գործ չէ,որ կարելի է իրականացնել դասարանում և ապա մոռանալ դրա մասին; Դեպի քննադատական մտածողություն տանող քայլերի լիարժեք ցուցակներ գոյություն չունեն; Սակայն որոշակի պայմաններ և աշակերտների պատկերացումներ կարող են նպաստել քննադատական մտածողության զարգացմանը: Քննադատական մտածողությունը խթանելու համար ուսուցիչները պետք է .

- Ժամանակ ու հնարավորություն տան քննադատական մտածողության փորձառություն անցնելու համար
- Թույլ տան աշակերտներին խորհել
- Ընդունեն տարբեր գաղափարներ և կարծիքներ
- Նպաստեն ուսումնական գործընթացում աշակերտների ակտիվ ներգրավվմանը
- Աշակերտների համար ծաղր բացառող միջավայր ստեղծեն
- Հավատ ունենան յուրաքանչյուր աշակերտի քննադատաբար մտածելու կարողության նկատմամբ
- Գնահատել քննադատական մտածողությունը

Ժամանակը

Քննադատական մտածողությունը ժամանակ պահանջող գործ է մի քանի պատճառով; Մինչ նոր բանի մասին մտածելը, մարդուն ժամանակ է պետք վերհիշելու համար;

Սեփական մտքերը երևան հանել՝ նշանակում է հետախուզել նախորդ գաղափարները,պատկերացումները,հակացությունները և փորձառությունը;

Հնարավորություն

Աշակերտները միշտ չէ , որ ազատ խորհում են կարևոր գաղափարների շուրջ;Նրանք հաճախ սպասում են ,որ ուսուցիչը տա միակ ճիշտ պատասխանը;Սակայն քննադատական մտածողության մեջ ներգրավված աշակերտներն ակտիվորեն առաջ են քաշում նախնական վարկածներ և մտքերն ու հասկացություններն արտահայտում են տարատեսակ ձևերով:

Այդուհանդերձ,երբ ուսուցիչներն աշակերտներին քննադատական մտածողներ դառնալու հնարավորություն են տալիս,դա պետք է անեն զգուշորեն;Նրանք պետք է տարբերակիչ սահման գծեն հնարավորություն տալու և ամենաթողության միջև;

Աշակերտները պետք է իրենց պատասխանատու զգան սեփական մտածողության յուրօրինակության համար,բացի այդ՝ նրանք արժանի են ազնիվ արձագանք լսելու; Այսպիսով , քննադատական մտածելու հնարավորություն տալը ենթադրում է ,որ այն տրվում է բարենպաստ և արդյունավետ միջավայրի համատեքստում ,որտեղ առկա է խորհելու իրական նպատակը:

Բազմազանությունը

Հենց աշակերտներին թույլ է տրվում խորհել,ի հայտ են գալիս բազմաթիվ և բազմազան կարծիքներ և մտքեր:Երբ վերանում է պատկերացումը,թե գոյություն ունի միակ ճիշտ պատասխան ,դասարանում ծնվում է այնքան կարծիք, որքան աշակերտ կա:Փորձել սահմանափակել արատայտվող կարծիքների քանակը կնշանակի սահամանափակել աշակերտների մտածողությունը; Քննադատական մտածողությանը զարգանալու հնարավորություն տալու համար դասարանում պետք է հաստատվի այնպիսի միջավայր,որտեղ աշակերտները վստահ լինեն,որ ընդունելի և հանդուրժելի է կարծիքների ու մտքերի լայն բազմազանությունը;Այդ դեպքում տարբերությունը կարող է լինել միայն այդ ճիշտ պատասխանին հասնելու առանձին ,անհատական միջոցի կամ գործընթացի մեջ,և շատ դեպքերում դա ավելի կարևոր է ,քան պատասխանն ինքնին; Իսկ եթե դասաժամի մեծ մասը վատնվի միակ ճիշտ պատասխանը գտնելու վրա,նշանակում է ,որ մտածողությունը չի ընթացել առանձնապես իմաստալից մակարդակում;

Ներգրավվում

Երբ պակասում է մտածողության և ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավումը,բացակայում է քննադատական մտածողությունը; Աշակերտներից շատերը դպրոց են գալիս որպես պասիվ սովորողներ՝ունենալով այն պատկերացումը, թե ուսուցիչ,որ տիրապտում է գիտելիքին,պատասխանատու է իրենց սովորելու համար;Նրանց պատկերացմամբ գիտելիքը ֆիքսցած երևույթ է,որը պետք է լցնել մարդու գլուխը,իսկ մարդն իր հերթինպետք է այն բարձրաձայն վերարտադրի՝ցույց տալու համար, որ այդ գիտելիքը յուրացրել է;Նման աշակերտները չեն ներգրավվում քննադատական մտածողության մեջ, մինչև իրնց չեն ոգևորում համապատասխան քաջալերանքով, որ իրենք ևս ակտիվորեն պետք է մասնակցեն սեփական ուման գործընթացին;

Համարձակություն

Ազատ մտածելը կապված է որոշակի համարձակության հետ;Մտքերը կարող են ծագել միաժամանակ,ընդ որում՝ տարօրինակ, զավեշտական և երբեմն էլ հակասական ձևերով;Մտածելու գործընթացի արդյունքները հաճախ լինում են ոչ խելամիտ գաղափարներ,խելահեղ համադրություններ կամ շփոթեցնող հասկացություններ;

Ուսուցիչներտ պետք է վստահեցնեն աշակերտներին,որ սովորելու ընթացքում այդ ամենը բնականոն է;Կարևոր է նաև հստակ սահմանել,որ մտքերը ծաղրելը միանգամայն անհանդուրժելի է,քանի որ դրա հանարավոր դրսևորումը մեծացնում է անհատական ռիսկի զգացումը և արգելակում է մտածելու ընթացքը;

Հարգանք

Երբ աշակերտները հասկանում են, որ իրենց մտքերը կարևորվում են,երբ նրանք հավատում են,որ ուսուցիչն իսկապես հարգում ու գնահատում է իրենց մտքերն ու պատկերացումները,նրանք շատ ավելի մեծ պատասխանատվությամբ ու զգուշությամբ են մոտենում սեփական մտքի արդյունքին: Աշակերտները սկսում են ավելի մեծ հարգանք տածել սեփական մտավոր աշխատանքի նկատմամբ,իսկ տեսնելով նաև ուսուցչի հարգանքը՝ առավել լրջամիտ են դառնում և մտածելու գործընթացի,և դրա արդյունքի նկատմամբ;

Արժևորում

Պատասխանները,որ մենք պահանջում ենք աշակերտներից ,հուշում են ,թե ինչն է ամենաշատն արժևորվում;

Ակտիվ ներգրավվում

Այն աշակերտները, ովքեր լիակատար ներգրավման փորձ են ձեռք բերում ,գալիս են այն ըմբռնման, որ ուսմանը բավականաչափ ջանք ու եռանդ նվիրելու և ուսումնական գործընթացում լիակատար ներգրավվելու դեպքում կարելի է սովորելուց մեծ հաճույք ստանալ և վերջում բավարարվածության ավելի մեծ զգացում ապրել:

Մտքերի փոխանակում

Սեփական պատկերացումները, մտքերը և կարծիքները ուրիշներին հաղորդելը բավականին համարձակ քայլ է: Աշակերտը ստիպված է բացեիբաց ցուցադրել ուրիշներին,թե ինքն ինչպիսի մտածողության ու ինչ պատկերացումների տեր է և որ ընդունակէ և մեծ մտքերի, և մեծ սխալների:

Լսել

Դասարանում ընկերների հետ մտքեր կիսելը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա լսել, կարողանա կասեցնել իր դատողությունները կամ խոսակցությունը սեփական ձևով տանելու ներքին պահանջը:

Սեփական դասի նմուշ օրինակ

Մայրենի-2

Դասի թեման՝ Ոզնին

Կանխագուշակում և նպատակադրում

Քննարկում ենք <<Ինչպե՞ս են պաշտպանվում կենդանիները >> հարցը:

Ամեն մի կենդանի ինչ- որ կերպ պաշտպանում է իր կյանքը, իր ձագին, իր որս անելու տարածքը:

Սովորողներին բաժանում եմ խմբերի: Տալիս եմ կենդանիների կտրտված պատկերներ:Այդ պատկերները միավորելով սովորողները ստանում են կենդանիներ և խմբային աշխատանքի միջոցով պատասխանում հետևյալ հարցին.

Ինչպե՞ս է պաշտպանվում այն կենդանին, որի պատկերը ստացաք դուք;

Նախքան արձագանքելը ,աշակերտներից յուրաքանչյուրը գրում է նշված հարցի իր պատասխանը,գործը դանդաղում է, որը հնարավորություն է ստեղծում աշակերտին մտածելու;Ապա առաջարկում եմ հանելուկ;

Լսում են հանելուկը, և որոշում ,թե որ կենդանու մասին է դասանյութը;

Այո':Խոսքը ոզնու մասին է;իսկ ոզնին ինչպես է պաշտպանվում;

Սովորողները գալիս են այն եզրակացության,որ ոզնու պաշտպանական միջոցն իր փշերն են;

Հարց

Իսկ ինչ կլինի,եթե ոզնին փշերը կորցնի;

Ընդհանուր հարցուպատասխանի վրա հիմնված քննարկամն հաջողության բանալին մեկնաբանող հարցն է:Այն աշակերտներին առաջարկում է ավելի խորը մտածել տեքստի մասին և ոչ թե նախընտրել խոսել իրենց սեփական փորձառության մասին:

Հարցեր՝

1.Ինչպես կբացատրեիք ոզնուն,որ չի կարելի փուշը վաճառել:

2.Այս բանաստեղծությունը գրելով՝հեղինակն ինչ նպատակ է հետապնդում:

Եվ որպես եզրափակիչ հարց.

--Եկեք մտածենք՝ ինչ կլիներ,եթե բոլոր կենդանիներն էլ ոզնու նման մտածեին:

Նմանատիպ հարցերը օգնում են երեխաներին հետ գնալ և հարց տալ,թե արդյոք ճիշտ վարվեց,ճիշտ կլիներ նման արարք կատարել առօրյա կյանքում,հրաժարվել այն ամենակարևորից,որը մեզ օգնում է ողջ կյանքի ընթացքում,հանուն մի փոքր և կարճ զվարճանքի;

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Երեխայի համար խաղն ամենալուրջ գործն է; Խաղի ժամանակ երեխայի առջև բացահայտվում է աշխարհը, բացվում են անձի ստեղծագործական ունակությունները: Առանց խաղերի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում:

Վ. Ա.Սուխոմլինսկի

Խաղը մարդուն ուղեկցել է նրա պատմական զարգացման բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն որպես զվարճալի զբաղմունք , այլև կյանքի տարբեր հարաբերություններում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, քննադատական մտքի ձևավորման միջոց: Մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու այն խոսքերը, թե « եթե մանկավարժությունն ուզում է մարդուն դաստիարակել բոլոր հարաբերություններում, ապա նա պետք է մարդուն ճանաչի բոլոր հարաբերություններում»[1] այսօր նույնպես արդրական է: Մարդուն բոլոր իմաստներով, բոլոր կողմերով ճանաչելու համար բավական է նրան ուսումնասիրել խաղային գործունեության ժամանակ:

Խաղերի բազմազանությունը տարբեր բնույթի արգելքներ է ստեղծում նպատակին հասնելու՝ հաղթելու ճանապարհին: Այդ արգելքները հաղթահարելու ժամանակ յուրաքանչյուր երեխա դրսևորում է ինքնատիպ վարք՝ ուժ, ճարպկություն, խարդախություն, հնարամտություն, խելք,գիտելիքներ, կռահում, քննադատում և այլն:Հենց այդ արգելքների հաղթահարման գործընթացն էլ նպաստում է երեխաների ընմբռնողականության, ուշադրության, հիշողության, կամքի, դիտողունակության, մտածողության, երևակայության զարգացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը,այդ ուղղությամբ արժեքավոր ունակությունների ձևավորմանը:

Այսօր կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն չափազանց հետաքրքիր ու զարգացնող խաղալիքներ, խաղում են բազմաշերտ մտավոր գործունեություն պահանջող ծաղեր, էլ չենք խոսում համակարգչի ու համացանցի ընձեռած հնարավորությունների մասին:

Մեր ուսումասիրությունները, գործընկերների և ծնողների հետ անցկացրած զրույցները, իրականացրած դասալսումները մեզ բերել են այն եզրակացության, որ դպրոց ընդունվող ոչ բոլոր երեխաներն են տիրապետում ուսումնական գործունեություն ծավալելու համար չափազանց կարևոր այս ունակություններին, որոնք, բնականաբար, պիտի ձևավորվոն ու զարգանան դպրոցում դասավանդվող

բոլոր առարկաների դասերի ընթացքում՝ ստեղծելով անձի բազմակողմանի զարգացման հնարավորություններ։

Խաղի տեսությամբ զբաղվող մասնագետները ներկայացնում են խաղերի դասակարգման բազմաթիվ մոտեցումներ(Կապտերև Պ. Ֆ., Ամոնաշվիլի Շ. Ա., Վիգոտսկի Լ. Ս., Էլկոնին Դ.Բ. և այլք)։ Ըստ էության , խաղերի բոլոր տեսակներն էլ, անկախ նրանց նպատակադրումներից, վերջին հաշվով, նպաստում են երեխաների մտքի և ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը։

Ընդգծելով մանկավարժական գործընթացում խաղերի օգտագործման կարևորությունը՝ Պ. Ֆ. Կապտերևը գրում է.«Տարբեր պատճառներով զարգացման մակարդակով իրենց տարեկիցների հետ մնացող երեխաները դպրոցում առանց խաղի փոխանակ զարգանան, կսկսեն հիմարանալ, գորշ, անբովանդակ, անիմաստ կյանք վարել, ժամանակը անցկացնել ապարդյուն։ Եթե ուսուցիչն այնքան խելամիտ լինի, որ գիտելիքները կապի խաղերի հետ, կարողանա այդպիսի երեխաներին ակտիվ մարմնական գործունեություն ներկայացնող խաղային գործունեությունից հմտորեն տանել դեպի ուսումնական խաղաղ, կլանված, համեմատաբար նստակյաց գործունեություն, ապա նա ձեռք կբերի այսպիսի երեխաների ընդունակությունները բացելու բանալին, կկարողանա կառավարել նրանց զարգացումը և ցուցաբերելէականորեն կարևոր, անգնահատելի ծառայություններ նրանց ողջ հետագա կյանքում»[1]։

Ճանաչողական խաղեր

Որպես ուսուցման մեթոդ խաղը իրականության մոդելավորման մի ձև է, հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել:

Խաղի մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողի ճանաչողական գործունեությունը իրականությանը մոտեցնելն է : Այս խաղերը լայնորեն կիրառվում են հատկապես օտար լեզուների և գրականության դասավանդման, ինչպես նաև համակարգչային ուսուցման պրոցեսում[2]:

Ի՞նչ կլինի , եթե հանկարծ

Խաղի նպատակները։ Այս խաղը զարգացնում է երեխաների ստեղծագործական ընդունակությունները, քննադատական միտքը։ Միաժամանակ ուսուցիչը խաղի ընթացքում կարող է ճանաչել իր աշակերտներին ավելի լավ, հասկանալ նրանց զգացմունքները։ Խաղը կարելի է կազմակերպել ինչպես դասի վերջում, այնպես էլ դասարանական տարաբնույթ հավաքների ժամանակ։

Խաղի ընթացքը։

Ուսուցիչ- ես կուզեի ձեզ հետ լինել մի խաղ- հեքիաթում: Ինչ կարող էր տեղի ունենալ, եթե, ինչպես հեքիաթում է լինում, դուք դառնայիք որևէ կենդանի: Օրինակ՝ ի՞նչ կենդանի կուզենայիք դառնալ և ինչու՞:Հանձնարարական յուրաքանչյուր երեխայի ժամանակ ենք տալիս որոշելու, թե ինքն ինչ կենդանի կցանկանար դառնալ: Այնուհետև յուրաքանչյուր աշակերտ պետք էդուրս գա

կենտրոն և ասի այդ կենդանու անունը, ցույց տա , թե ինչպե՞ս է շարժվում:

Վարժության հարցեր:

-ի՞նչ ցանկություն կհայտնես, եթե կախարդական փայտիկ գտնես;

- Ու՞ր կթռչես, եթե թռչող գորգ ունենաս:

-ի՞նչ կանեիր , եթե հիմա 20 տարեկան լիներ:

-ի՞նչ կանեիր , եթե ուսուցիչ լինեիր:

- եթե դու այլ մարդ լինեիր, ու՞մ կցանականայիր նմանվել և ինչու՞:

Ո՞րն է ճիշտ

Խաղի նպատակները երեխաների բառապաշարը հարստացնել հրաշալի բառերով և արտահայտություններով, դաստիարակել քաղաքավարի հաղորդակցվելու ունակություն, զարգացնել քննադատական միտքը:

Անհրաժեշտ պարագաներ խաղում նկարագրված թեմաներով առանձին նկարներ և դրանց համապատասխան հրաշալի բառեր:

Խաղի ընթացքը. Դասարանը 1-4 հաշվով բաժանում ենք 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալիս ենք նմարներ և դրանց համապատասխան բառեր(նկարներում պետք է ներկայացվեն ինչպես բարեկիրթ, այնպես էլ ոչ բարեկիրթ վարվելաձևերը, իսկ առանձին թղթերի վրա լինեն «խնդրում եմ»,«ներողություն»,«շատ բարի»,«թո՛ղ»,«չե՛մ տա»«տո՛ւր»«տո՛ւր , խնդրո՛ւմ եմ» և այլ բառեր ու արտահայտություններ, որոնք համապատասխանում են նկարների բովանդակությանը): Երեխաները խմբով ընտրում և կողք կողքի են դնում բառերին համապատասխանող նկարները, բառերն ու արտահայտությունները: Ապա խումբը կորոշի, թե որ արտահայտություններն են բարեկիրթ, որոնք են անբարեկիրթ, և խումբը կընտրի մեկին ով քննադատորեն կներկայացնի խմբի կարծիքը:

Ո՞վ է նա : Ի՞նչ է նրան պետք

Ո՞վ է նա, ի՞նչ է անում

Դետեկտիվ,

Մենք հարցնում ենք, դուք պատասխանում եք.

այս և նմանատիպ բազմաթիվ խաղերը նպաստում են սովորողների քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմնը , ապահովում նրանց մասնակցությունը դասի։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ուսուցման մեթոդների և խաղերի ճիշտ ընտրությունը նպաստում է քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը տարրական դպրոցում։

2. Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել:

3. Թեև ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն կան մի շարք գործոններ, որոնք պայմանավորում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում և ուսուցիչը պետք է միշտ հաշվի առնի այդ գործոնները:

4. Դպրոցական պրակտիկայում առավել հաճախ կիրառվում են խոսքային, զննական և գործնական մեթոդները :

5. Մարդուն բոլոր իմաստներով, բոլոր կողմերով ճանաչելու համար բավական է նրան ուսումնասիրել խաղային գործունեության ժամանակ:

6. Մեր ուսումասիրությունները, գործընկերների և ծնողների հետ անցկացրած զրույցները, իրականացրած դասալսումները մեզ բերել են այն եզրակացության, որ դպրոց ընդունվող ոչ բոլոր երեխաներն են տիրապետում ուսումնական գործունեություն ծավալելու համար չափազանց կարևոր մի շարք ունակություններին, որոնք, բնականաբար, պիտի ձևավորվեն ու զարգանան դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերի ընթացքում՝ ստեղծելով անձի բազմակողմանի զարգացման հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ջինի Լ.Սթիլ, Քուրթիս Ս.Մերեդիթ և Չարլզ Թեմփլ- Քննադատական մտածողության համակարգը ուսումնական ծրագրի ողջ համատեքստում.

Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր

Գյուլամիրյան Ջ, Խաղալով սովորենք, Երևան, 2009,

Ղաջոյան Հ., Երեխաները տարիքն ի վեր, Երևան, 2002, էջ 23,

Каптерев П.Ф, Дидактические очерки, Петроград, 1915 стр .350

Ушинский К. Д ., Педагогика, М., 2019, стр.